

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑՈՒԻ ԿԱՆՈՆԴԻՐՔ

I.

Սուրբ Գրքի խօսքերի համեմատ մարդու ստեղծելու հետ մէկտեղ օրէնքն էլ հետը դրուեցաւ, մի փոքր էլ առաջ զնալով պիտի ասենք, որ ամեն մի ազգ և հասարակութիւն թէ նախապատմական դարերում և թէ յետոյ ունեցան իրանց եթէ ոչ զրաւոր, զոնէ բանաւոր օրէնքները, որոնք որոշում էին մարդկանց փոխադարձ յարաբերութիւնը միմեանց հետ և որոնց մէջ արտայայտում էր նոցա ընտանեկան, քաղաքական և կրօնական կեանքը:

Ինչ որ կարելի է ասել ընդհանուր մարդկութեան համար, նոյնը անշուշտ վերաբերելի է և հայ ժողովրդին, որ նրա մի մասն է կազմում: Հայ ազգն էլ հարկաւ ունեցել է նախ բանաւոր և ապա դրաւոր օրէնքներ իւր կռապաշտութեան ժամանակ, որոնց մասին դտնում ենք յիշատակութիւն Խորենացու և Փաւստոսի մէջ, բայց որոնց հետքն էլ չէ մնացել մեր գրականութեան մէջ:

Այլապէս էլ անկարելի է երևակայել մի ժողովուրդ, որ ապրում է, ունի իւր անցեալլ, այդ անցեալի վերայ հիմնուած սովորութիւններ ու արարողութիւններ, ունի մի կրօն և կրօնի պաշտօնեաններ, ունեցել է պետութիւն

և այդ պետութեան ներկայացուցիչներ, և այլն, անշուշտ դոցա փոխադարձ յարաբերութեան և ընկերական կեանքի համար էլ պէտք է ունենար որոշ սահմաններ, որոշ հրահանգութիւններ, որոնք կոչում են օրէնք և որոնցով պէտք է առաջնորդուէին հանապազօրեայ կենցաղավարութեան մէջ:

Քրիստոնեայ չայաստանը, որ կարելի է առել, ուշընացրեղ ամեն բան, ինչ որ կարող էր յիշեցնել հային տարրապաշտութիւն կամ կռապաշտութիւնը, ինչ որ կարող էր անցեալի գէթ ամենաժոյլ յիշողութեամբ զայթակեցնել նորան նոր կրօնի ուսումից, յիրաւի չպահեց ոչ մի նշանախեց հայի նախաքրիստոնէական դարաւոր կրօնից և նորա քաղաքական, ընտանեկան կամ կրօնական օրէնսդրութիւնից, սակայն դորա փոխարէն, քրիստոնէութեան ուսումը աւելի հաստարմատ ամրացընելու համար հայ ժողովրդի մէջ՝ ինքը հարուստ եղաւ եկեղեցական օրէնսդրութիւններով և մեր եկեղեցական հայրերը ամեն զանք գործ դրին ստուարացնել այդ օրէնքները կամ, ինչպէս զոքա այժմ կոչում են «Կանոնգիրը», նախ՝ առաքելական և երեք տիեզերական ժողովների կանոններն ընդունելով և ապա հետզհետէ աւելացնելով մեր բազմաթիւ ազգային եկեղեցական ժողովներում սահմանուած կանոնները:

Սյդպիսով առաջ եկաւ մի մեծանատոր ժողովածու եկեղեցական կանոնների, որոնցով վարուել է երկար տարիների ընթացքում հայ եկեղեցին. այդ կանոնգրքի մի մի օրինակ այժմ էլ գտնւում են հայոց հոգիոր ամեն հաստատութիւնների ատհաններում և ամեն մի դժուարալյոյծ խնդիրների ժամանակ՝ այդ վարչութեանց զեկավարները ապաստանում են այդ կանոնգրքերին, մանաւանդ ամուսնական կնճռոտ և բարդ հարցերի լուծումն գտնելու և պատժի եղանակներ որոշելու համար:

II.

Բայց այդ կանոնները կարող են բաւականութիւն տալ այսօրուան հայ սերնդին. մինչդեռ գոքա զրուած են դարերով առաջ և հարկաւ յարմարեցրած են ժամանակակից ժողովրդի կեանքի պէտքերին, երբ մարդկանց հայեցուածքներն ու գաղափարները, ընտանեկան կեանքն ու ազգի կեցութեան պայմանները բոլորովին տարրերուում էին այժմեանից. — այդ գեռ մնում է անլուծանելի խընդիր և իրաղութիւն այսօր ցոյց է տալիս, որ առանց այդ կանոններից որևէ մէկ յօդուած պաշտօնապէս բարեփոխելու՝ կեանքն ինքը փոփոխել է շատ բան և կանոնգրքի յօդուածներից մի ստուար մասը գործածութեան մէջ չեն, այլ նոցա դէմ կեանքը ստեղծել է նորադայն օրէնքներ, որոնց եկեղեցին ևս սրբագործել է ներելով և շարպելով:

Օրինակ՝ այլ ևս գաղտնիք չէ ոչ որի համար, որ այն՝ ինչ որ միանգամ «եօթնամսեայ» և «եռամեայ» առ գրունս եկեղեցւոյ ապաշխարելու առիթ էր տալիս, այսօր սովորական թոյլատրելի հանգամանք է ներկայանում:

Եօթներորդ աստիճանի ազգակցական և խնամական ամուսնութիւններն ¹⁾ իջել են հնդական աստիճանի և երբեմն աւելի պակաս:

Երրորդ և չորրորդ ամուսնութիւնը օրինական չէր համարւում, այլ շնուրթիւն ²⁾, բայց գոքա այժմ արդէն մտել են օրինական արարողութիւնների շարքում:

¹⁾ Սաոյ թ. Ժողով. լ.

²⁾ Կանան ս. Բարսղի. դ.

Վաթսունամեայ մարդ կամ կին եթէ ցանկային ամուսնանալ, եկեղեցին պարտաւոր էր մերժել նոցա, որովհետեւ այդ տեսակ ամուսնութիւնը պոռնկութիւն էր համարւում ³⁾։ Այդ արգելքը վերացուած է այժմ։

Քրիստոնեաներին արգելւում էր հարժանիքներում խաղալուն կամ երգելսւն մասնակցել ⁴⁾, որ ի հարկէ չէ կատարւում։

Նոյնը արգելւում էր նաև քահանաներին և նոյն խակ պսակելուց յետոյ ընթրիքի մնալը ⁵⁾, բայց այժմ հասարակեալ սովորութիւն է միանգամայն սորա հակառակր։

Եթէ հոգիորականներից մէկը մծղնէութեան մէջ բռնուէր՝ ճակատին պէտք է աղոււսագրոշմ դնէին ⁶⁾, սակայն մենք դեռ ոչ մէկի ճակատին աղուէսագրոշմ չըտեսանք։

Նոյնպէս էլ եթէ նոյն ախտի մէջ ժողովրդից մէկը բռնուէր ⁷⁾ և քահանաներն իմանային այդ՝ պարտաւոր էին բողոքել եպիսկոպոսին, հակառակ դէսքրում նոյն պատիժը պիտի կրէին, որ տեղի չունի ամենին։

Պոյսին խստիւ արգելուած էր պսակուել այրու հետ և ընդհակառակը ⁸⁾, այն ինչ այժմ խիստ սովորական բան է այդպիսի պսակը։

Մեր կանոններով կարելի չէր 50 տարին անցկացրած մարդուն քահանայ ձեռնադրել, որովհետեւ այդպիսի անձին պայտ վայրի և անձն աղճատին և միտքն, և ժամանակ է զինքն պատրաստել իւրում ուղենորութեան,

³⁾ Ա. Բարսղի գիր կանոնական։

⁴⁾ Լաւողիկեայ. ծ. ծա.

⁵⁾ Նէովեստարիոյ. է.

⁶⁾ Կանոնք Վարդապետաց Հայոց. ժթ.

⁷⁾ Նոյն ի.

⁸⁾ Դըմնոյ ը. ժողով, իդ.

պայծառացուցանել զլապտերսն, զի մի զայլս հոգալով, զինքն անհոգս արացի, ի յաւիտենական կենացն»⁹⁾, Այս կանոնի դէմ բացառութիւնները սովորական երևոյթ են մեր զարում:

Քահանան չպիտի իշխէր երեկի ձի հեծնել և մահաւանդ «Արեւելի հանդերժ հազնել», բացի խորհուրդ կատարելուց¹⁰⁾, իսկ մեր ժամանակ մետաքսներն ու թափշները հսկորականների պլիսաւոր զարդն են կազմում:

Քահանայք պլիտի թաղուէին անշուշտ ժողովրդականաց հանգստարաններում և ոչ պատուի համար եկեղեցում¹¹⁾, այն ինչ այժմ եկեղեցեաց զաւիթները ոչնչով չեն զանազանում հասարակաց գամբարաններից:

Ամուլ կնոջ հետ խստիւ արգելում էր ամուսնութիւնը և այդ բանն օրէնքն այսպէս էր բացատրում. «կին եթէ ամուլ գիտեսցի անդիտարար ամուսնանալով անմեղը են, մի որոշեսցին, իսկ զոր յայլոց արանց փորձեալ իցէ, և յետոյ այլը առնուն զկանայս անպատուզն, նոքա են ըստ նմանութեան քաղլից և խոզից, որք զվայրանալն կամիցին, պարտական եղիցին Աստուծոյ՝ նոքա... զդատաստան ընկալցին. եօթն ամ արտաքոյ եկեղեցւոյն ապաշխարեսցին և տասն ամ եկեղեցի մտցէ և ելցէ ընդ ապաշխարողսն և ապա հապորդեսցի օրինացն»¹²⁾:

Եալիսկոպոսներն իրաւունք չունէին թուլատրելքորեալիսկոպոսներին կամ քահանաններին սեղան հաստատել տալ կամ եկեղեցի օրհնել¹³⁾, սակայն այժմ ամենուրեք գրեթէ քահանայք են եկեղեցի օծովները.

⁹⁾ Կանոնք Թաղէսսի առաքելոյն դ.

¹⁰⁾ Բարսղի գիր կան.

¹¹⁾ Սահմանք Սահակայ կաթուղիկոսի ժա.

¹²⁾ Կան. Փիլիպ. առ. ը.

¹³⁾ Կան Սիօն չ. կաթ. ե. —Պարտաւի ք. ժողով դ.

Առաւօտ իրիկուն ժամ չգնացող աշխարհականին նղովում են նոյն կանոնները¹⁴⁾, իսկ «...եթէ ոք հեղ- պասցի և կամ ըստերիւրծալ գտցի, յանդիմանեսցեն, կըշ- տամբեսցեն խրատու վարդապետովեան և գանձիւք և տուգանօք պատուհասեսցեն. ատենական հրապարակաւ, զի և այլք երկիցեն»:

Եկեղեցի մտնողը եթէ մինչև ժամերգութեան վերջը չէ մնում այնտեղ «'ի բաց որոշեսցի»¹⁵⁾:

Այր և կին միասին բազանիք չպիտի գնան¹⁶⁾:

Ուղտի, ցուու և նապաստակի միս ուտողին մի տա- րուայ ապաշխարանք էր որոշուած»¹⁷⁾:

Քահանաներին հասանելի արդիւնքները, ինչպէս նաև էրին և մորթին ու այլ հասոյթները արդելողին «զոր ուուրբ հայրապետացն կարգեալ է ազդմամբ ո. Հոգ- ւոյն» Քրիստոսի խաչ հանողների թւումն են դասում կանոնները¹⁸⁾:

Պակաս նշանաւոր չէ և այս կանոնը, որով արգել- ւում է վաճառականներին էշերի կամ գազանների մոր- թիներով առևտուր անել. «Որ զենու զէշ և զվերարկու նորա վաճառէ՛ որոշեսցի յեկեղեցւոյ և որք զանմաքուր ի գազանաց կամ անասնոց զենցեն և վերարկուս նոցա վաճառեսցեն հեթանոսաց և զարծաթն կերիցեն, այնպէս է, որպէս զէշ, շուն ուտիցեն նոցա և որոշեսցի յեկեղեց- ւոյն»¹⁹⁾:

¹⁴⁾ Կանոնք հարանց հետևողաց առաքելոց, գիր կանոնական և. Բարսղի խ.

¹⁵⁾ Կան. առաքելոց ի ձեռն Կղեմայ. թ.

¹⁶⁾ Բ. Նիկիական.

¹⁷⁾ Բարսղի գիր. կան.

¹⁸⁾ Նոյն.

¹⁹⁾ Կան. Փիլիպ. առ.

Եյդ կանոններով ժողովուրդը յոտընկայս պիտի ա-
ղօթէր եկեղեցում, մինչդեռ այժմ Կ. Պօլսի բոլոր եկե-
ղեցիներում փառաւորապէս շարուած են բազմաթիւ գե-
ղեցիկ նատարաններ, կին մարդկանց դասը բաժանուած
էր այր մարդկանցից որոշ որոշ կանդնելու նպատակով,
իսկ այժմ ամենուրեք անխտիր կանդնած են եկեղեցում
խառն ի միասին և այն և այն:

III.

Չնայելով մեր այնքան հարուստ կանոնզրբին՝ եկե-
ղեցու բարեկարգութեան խնդիրը միշտ հոգս է պատճա-
ռել և զրագեցրել մեր եկեղեցու չովուապեսներին և մին-
չև անզամ պատրիարքներին և առաջնորդներին, որոնք և
չովուական թղթներով և կոնդակներով, կամ պաշտօնա-
կան հրահանգներով զանազան ժամտնակ գուն ևն զործել
լրացնել եղած կանոնների պակասը, բացատրել նոցա
դժուարիմաց խմաստները և կամ ժամանակի պահանջի
համեմատ սրբազնել այս կամ այն կանոնը, զիսաւորա-
պէս ժողովրդի կենցաղավարութեան վերաբերեալ:

Ըրգեօք այդ կանոններից ոմանց փոփոխելի լինելը
չէ պատճառ հետազայ երեք կանոնների գոյութեան,
որոնք խմբագրուած են տակաւին քրիստոնէութեան առա-
ջին դարերում:

«Երկիցս ի տարւոցն ժողով լինի եպիսկոպոսացն և
քննեցին առ միմեանս զհրամանս բարեպաշտութեան և
զպատահալն եկեղեցական ընդդիմարանուժին լուցցեն
միանդամայն՝ ի չորրորդ շաբաթու պիտի կոստէիցն և
երկրորդ յաշնանային»²⁰⁾:

²⁰⁾ կանոնք. թ. Առաքելականք. լե.

«Վասն ամենայն իրիք եկեղեցւոյ բնծութիւն արասցեն»: ²¹⁾

«Վասն եկեղեցւոյ իրաց եթէ հակառակութիւն ինչ իցէ... զի լուծցի... ժողով լիցի յեպիսկոպոսաց... երիցս ի տարին... զի ի նոյն ժողովն հպեսցին և մերձեսցին եթէ երիցունք, եթէ սարկաւագունք...» ²²⁾:

Այն, Հայաստանեայց եկեղեցու բարեկարգութեան խնդիրը առաջնակարգ կարևորութիւն է ունեցել միշտ և դորանով է բացատրում, որ այնքան շատ եկեղեցական աղդային ժողովներ տեղի ունեցան Հայաստանում։ Նոյն իդեալով է եղել զգացուած և արդեան արժանընտիր Հայրապետ Տ. Տ. Մկրտիչ կաթողիկոսը տակաւին տասնեակ տարիներ սրանից առաջ։ Մեր ձեռքն ընկաւ «Աղօթակից Հայրիկի» մի դրութիւն 1886 թ. մայիս 7. ին հանգ. Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանին ուղղած, որ ամբողջապէս առաջ ենք բերում այստեղ։

«. Տարէք ողջոյն հայրիկի կողմէն վեհապանծ Մա. «սիսին, Այրարատայ դաշտին, էջմիածնայ տաճարին, Հայրապետի ս. Սզն ևս համբուրեցէք մեր կողմէն։ Թէ ինչ «ալիտի խօսիք վասն Հայաստանեայց եկեղեցւոյ, վասն բարեկարգութեան, վասն անկեալ պաշտօնէից և այլն և այլն, այդ ամեն ձեր սրամտութեան կիրարում։ Երանի միշտ միարան և միաձայն լինէիր Օռմանեանին հետ ոչ միայն խօսէիք այլ և ծրագրելով մատուցանէիր նորին «Վեհափառութեան։ Շօշափեցէք նորա միտք թէ կարող էք մի ընդհանուր ժողով կազմել և ի մէջ բերել եկեղեցւոյ բարեկարգութեան խնդիր, որ ի քանի հարիւր ամաց «հետէ ձեռնարկուած չէ երրէք։ Եթէ առ այս բազմագլումի դժուարութիւնք գոն, գոնէ մի մի կարող մասնա-

21) Կան. Նիկ. Ե. նոյն ս. Բարսղի գիր կանոն.

22) Անտիռքայ կան. ԺԹ.

«Ժողովի ձեռքով որոյ անդամք խառն լինին Թուրքիային և Ռուսիոյ որոյ պաշտօն պէտք է լինի հաստատել կարգել ծրագիր պատրաստել և մատուցանել նորին Վեհափառութեան, որ կարող է իւր կոնդակաւ հրատարակել զամենայն վիճակս հայաստանեայց եկեղեցւոյ»:

IV.

Արդ՝ մենք ունինք կանոնգիրք հարուստ և ընդարձակ, լիովի հրաժանգներով ինչպէս եկեղեցու և եկեղեցականների նոյնպէս և ժողովրդի կեանքի ամեն պարագաների վերաբերեալ, որ ոնք պիտանի և արդի մեր եկեղեցու կառավարութեան համապատասխան և օգտակար մասեր և նոյնպէս մի շարք կասոններ, որոնք թէպէտ նշանակութիւնից զուրկ չէին այն ժամանակի վերաբերմամբ, որի համար նոքա զրուած էին, սակայն այժմ, հայ ժողովրդի կեցութեան հանգամանքների և ընկերական պայմանների փոփոխուելու պատճառով և միւս կողմից ժամանակիս գաղափարների դարգանալով անհամապատասխան են ժողովրդեան և կարօտ են բարեփոխութեան թայց ամենից առաջ ուսումնասիրութեան պէտք ունին Եկեղեցական կանոնների զիտութիւնը մեծ լոյս կը սփռէ չայաստանի ընկերական կեանքի վերայ, ինչպէս նաև ախարհական օրէնքների ուսումնասիրութիւնը նորա բաղարական բարք ու վարքի վերայ. Այս մէկ կողմից:

Միւս կողմից էլ մենք տեսնում ենք առօրեայ կեանքում, թէ որքան են բաղմանում ամուսնական չհասութիւններ և ամուսնալուծութիւններ. այսօր ամեն մի չընչին դժգոհութիւն ամուսնական կեանքի մէջ առիթ է լինում օրինաւոր զոյգերին անջատուել միմեանցից և ամեն զանք գործ դնել նորից ամուսնալու իրաւոնք ստանալու:

Մենք այս շարիքի մի ամենագլխաւոր պատճառը համարում ենք մեր հասարակութեան անծանօթ և անընտել լինելը մեր եկեղեցական կանոններին. և ոչ միայն

հասարակութեան, այլ և եկեղեցական դասին միանգա-
մայն. հազուագիւտ բան չէ տեսնել, թէ ինչպէս գիւղա-
կան քահանաները յաճախ այս և այն մերձակայ քաղաքն
են գնում, իսկ քաղաքացի քահանաներն իրենց մէջ աւե-
լի հմուտների մօտ տեղեկանալու այս ու այն եկեղեցա-
կան կանոններին, թէ որ աստիճանի չհասութեան մէջ
կհասնին խօսեցեալները միմեանց կամ լի ճիւղագրու-
թեան ձև կազմել տալու և այլն. և յաճախ քահանանե-
րը անդիտութեամբ թոյլ տալով օրէնքով արգելեալ ա-
մուսնութիւններ՝ իրենց համար կորստեան վիճ են պատ-
րաստել ապագայում:

Թէ այս շարիքի առաջն առնելու և թէ հին հայերի
ընկերական կեանքն ու քաղաքուկան բարբերն ուսումնա-
սիրելու համար՝ նախ և առաջ անհրաժեշտ է չայ եկե-
ղեցու կանոնգրքի մի կատարեալ և անսխալ օրինակ կազ-
մել և նորան հրատարակութեան տալ. իսկ չոգեսոր իիշխա-
նութեան է մնում այդ կանոնգրքից մի վերջնական օրի-
նակ խմբագրել եկեղեցականների և ժողովրդի հրահան-
գութեան համար:

Գիւտ քահ. Աղանեանց

